# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2022 թվականի N 229 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՇՈՑՔ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով, Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, թիվ 1/3 հասցեում գտնվող 0.065585 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:
2. Փոխել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, կաթսայատուն թիվ 1/3 հասցեում գտնվող 106,71 քառակուսի մետր մակերեսով կաթսայատան գործառնական նշանակությունը՝ որպես բնակելի նշանակության շինություն՝ մառան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2022 թվականի դեկտեմբերի 5
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2022 թվականի N 230 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ 12.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ, 35-րդ կետի «ե» ենթակետի, 36-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-019-0024-0009 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.024184 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, Հայաստանի «Հայ Կաթողիկե Եկեղեցի» Կրոնական կազմակերպության կողմից ինքնակամ կառուցված պարիսպը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով /ՀՕ-397-Ն/ սահմանված օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված պարիսպը փաստացի տնօրինում, տիրապետում և օգտագործում է Հայաստանի «Հայ Կաթողիկե Եկեղեցի» Կրոնական կազմակերպությունը և այն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 27-ի N 183-Ա որոշմամբ շինությունները ճանաչվել է օրինական, այն համարվել է համայնքի սեփականություն և անշարժ գույի նկատմամբ իրավունքները ենթարկվել են պետական գրանցման (վկայական՝ 11102022-08-0024), ***որոշում եմ***

1. Հայաստանի Հայ Կաթողիկե Եկեղեցի ԿԿ կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 08-019-0024-0009 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.024184 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **12.9** քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպը (հետագայում՝ շինություն) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող 08-019-0024-0009 կադաստրային ծածկագրով 0.024184 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (վկայական՝ 11102022-08-0024, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակ, Աշոցք համայնք, գյուղ Արփենի, 7-րդ փողոց, պարիսպ 4/2), ուղղակի վաճառքով գնելու նախապատվության իրավունքի մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինությունն իրականացրած իրավաբանական անձ՝ «Հայ Կաթողիկե Եկեղեցի» Կրոնական կազմակերպությանը (վկայական՝ N 03Ա084500, անձնագիր՝ 442610110, տրված՝ 08.05.2008թ, ԱՄՆ ՊՌ-ի կողմից, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 0014, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի, 1/3):

2. Օրինական ճանաչված շինությունների և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 35-րդ կետի «բ» ենթակետի համաձայն ինքնակամ կառուցված հասարակական նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար վաճառքի գինը սահմանվում է բազային տուրքի 90-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված Աշոցք համայնքի, Աշոցք գյուղի համար սահմանված շինության **0.0536** գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

**12"9 քառակուսի մետր X 90 000 դրամ X 0.0536 = 62230 (վաթսուներկու հազար երկու հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:**

2) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33.1 կետի «բ» ենթակետի հասարակական կառուցապատման նշանակության կառույցների համար՝ կադաստրային արժեքով օտարվող հողամասերի առավելագույն չափը հաշվարկվում է ինքնակամ կառույցով զբաղեցրած տարածքի մակերեսի կրկնակին իսկ համաձայն որոշման 33.2 կետի՝ 33.1 կետի «բ» ենթակետով սահմանված հողամասի առավելագույն մակերեսի չափից ավելի հողամասի տրամադրման դեպքում ավել մակերեսով հողամասի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային արժեքի եռապատիկի չափով: Հաստատված՝ հողամասի առավելագույն չափը հասարակական նշանակության ինքնակամ շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության մեկ քառակուսի մետր հողամասի կադաստրային արժեքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված Աշոցք համայնքի Արփենի գյուղի համար սահմանված է **142** Հայաստանի Հանրապետության դրամ, կադաստրային արժեքով օտարվող հողամասի մակերեսը կազմում է **241.84** քառակուսի մետր, որի հաշվարկով հողամասի վաճառքի գինը կազմում է՝

**ա) 12,9 X2 քառ. մետր X 142 դրամ =3660 Հայաստանի Հանրապետության դրամ,**

**բ) 216,04 X142 X3=92033 ՀՀ դրամ**

Սահմանված չափերով ձևավորված շինության և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է՝

**157920 (մեկ հարյուր հիսունյոթ հազար ինը հարուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:**

3) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է՝ **157920 (մեկ հարյուր հիսունյոթ հազար ինը հարուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ,** որը ենթակա է վճարման Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին:

4) Ձեր կողմից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկը չընդունվելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գինը չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:

5) Ձեր կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2022 թվականի դեկտեմբերի 6
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2022 թվականի N 231 - Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱԼՎԱՐԴ ՄԱՄԻԿՈՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-042-005-014-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Սամվել Հարությունյանի դիմումը, **որոշում եմ**.

Քաղաքացիներ Ալվարդ Մամիկոնի Գասպարյանին և Սամվել Գևորգի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Սարապատ համայնք, գյուղ Թորոս, 8-րդ փողոց, 1-ին փակուղի, բնակելի տուն 1, հասցեում գտնվող, 08-042-005-014-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված՝ 2008 թվականի մայիսի 29-ին, վկայական N 2036871/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Թորոս, 8-րդ փողոց, 1-ին փակուղի, բնակելի տուն 1:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2022 թվականի դեկտեմբերի 6
գյուղ Աշոցք